ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ

Հոդված 28. Ապացույցներ ներկայացնելու պարտականությունը

(...)

6. Ապացույց պահանջելու մասին դատարանի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Դատարանի որոշումը կամովին չկատարվելու դեպքում ենթակա է կատարման ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

(28-րդ հոդվածը լրաց. 23.12.22 ՀՕ-599-Ն)

Հոդված 34. Դատական նիստին ներկայանալու վկայի պարտականությունը

1. Վկան դատարան է կանչվում դատական ծանուցման համար սույն օրենսգրքով սահմանված կարգին համապատասխան: Ծանուցագրում նշվում են դատարան չներկայանալու իրավական հետևանքները:

2. Վկան պարտավոր է ներկայանալ դատարան դատարանի կանչով: Եթե սահմանված կարգով ծանուցված վկան չի ներկայանում դատական նիստին, ապա դատարանը կարող է վկային բերման ենթարկելու որոշում կայացնել՝ նրա վրա դնելով չներկայանալու հետևանքով առաջացած ծախսերը: Միևնույն ժամանակ նրա նկատմամբ կարող է նշանակվել դատական տուգանք՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով: Բերման ենթարկելու մասին որոշումը դատարանն անհապաղ ուղարկում է ոստիկանությանը՝ կատարման:

3. Դատական տուգանքի նշանակումը և ծախսերի հատուցման պարտականություն դնելը, ինչպես նաև բերման ենթարկելու մասին որոշումը վերացվում են, եթե վկան ապացուցում է, որ նա ժամանակին չի ստացել ծանուցումը, կամ նրա բացակայության պատճառը հարգելի է եղել:

Հոդված 60. Դատական ծախսերի բաշխումը դատավարության մասնակիցների միջև

(...)

12. Դատական ծախսերի հատուցման վճարումը պետք է կատարվի դատական ծախսերի բաշխման հարցը լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց ոչ ուշ, քան 10 օր հետո, որի չկատարման դեպքում այն ենթակա է կատարման

~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 64. Ծանուցագիրն ընդունելուց հրաժարվելու հետևանքները

1. Ծանուցագիրն ստանալուց հրաժարվելը հավասարեցվում է այն հանձնված լինելուն և խոչընդոտ չէ գործը քննելու համար: Ծանուցագիրն ստանալուց հրաժարվելու մասին նշում է արվում ծանուցագրի վրա, որը վերադարձվում է դատարանին:

2. Վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից ծանուցագիրն ստանալուց հրաժարվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում անձին դատարան բերման ենթարկելու մասին: Բերման ենթարկելու մասին որոշումը դատարանն անհապաղ ուղարկում է ոստիկանությանը՝ անհապաղ կատարման:

Հոդված 92. Հայցի ապահովման մասին որոշման կատարումը

1. Հայցի ապահովման մասին վարչական դատարանի որոշումը կատարվում է անհապաղ՝ ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 101.2. Դատական տուգանք կիրառելու առանձնահատկությունները

1. Դատական տուգանքը կիրառվում է առավելագույնը 100.000 Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Դատական տուգանք կիրառելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից, և դրա ~~հիման վրա կազմված կատարողական թերթը~~ հարկադիր կատարման դիմումն ուղարկվում է հարկադիր կատարման, եթե ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, կամովին չի կատարվում: Որոշումը կատարվում է ~~«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության~~ «Կատարողական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Դատական տուգանք կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի կամ վերաքննիչ դատարանի որոշումը կարող է բողոքարկվել համապատասխանաբար վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան այն ստանալու պահից յոթնօրյա ժամկետում: Բողոքարկումը կասեցնում է դատարանի որոշման կատարումը:

Հոդված 127. Վարչական դատարանի դատական ակտերի օրինական ուժի մեջ

մտնելը

(...)

11. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո, բացառությամբ վերջնական աստրենտ նշանակելու, դրա չափը փոփոխելու կամ աստրենտը դադարեցնելու և դատական ակտի կատարման շրջադարձի դիմումի քննության արդյունքներով դատարանի կայացրած որոշման, որն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից երկու շաբաթ անց և այդ ժամկետում կարող է բողոքարկվել: